Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն 3

Ն ԿՄՁԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցմամբ գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Ջրվեժ «26» «հուլիսի» 2017թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Թադևոսյան, Գ.Բաղալյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

Ն ԿՄՁԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցման գնահատման արդյունքների հաստատման մասին

Տեղեկատվություններ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե կատարված հարցման և որակավորման փաստաթղթերի վերաբերյալ

1.ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող:

2. Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հաստատել որ ԿՄՁՀ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցման մասնակից՝ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացրած հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանում որակավորման պահանջներին «Մասնագիտական փորձառություն», «Աշխատանքային ռեսուրսներ» և «Ֆինանսական միջոցներ» չափանիշներով:

3.ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 47-րդ կետի համաձայն էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին առաջարկելով մինչև 2017 թվականի հուլիսի 27-ի ժամը 16:00-ն ներկայացնել արձանագրված անհամապատասխանությունների շտկումներ:

Մասնավորապես.

«Մասնագիտական փորձառություն» - ներկայացված փաստաթղթերում նմանատիպ՝ էներգետիկ բնագավառում կատարված աշխատանքների ծավալները չեն համապատասխանում, քանի որ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում էներգետիկ լիցենզիայի շրջանակներում աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

«Աշխատանքային ռեսուրսներ» - ներկայացված փաստաթղթերում ճարտարագետ-շինարարի որակավորումը հավաստող փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված էներգետիկ բնագավառում շինարարություն իրականացնող գործունեության ոլորտին:

«Ֆինանսական միջոցներ» - չափանիշը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

4.Նիստը ընդհատվում է մինչև 2017 թվականի հուլիսի 27-ի ժամը 16:00-ն՝ շտկված փաստաթղթերի հիման վրա հայտի գնահատման նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա.Մարգարյան
Անդամներ՝		Ս.Թադևոսյան
		Գ.Բաղալյան
Քարտուղար՝		Ա.Պետրոսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն 3
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն ԿՄՋԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցմամբ գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Ջրվեժ «27» «հուլիսի» 2017թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Թադևոսյան, Գ.Բաղալյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

Ն ԿՄՋԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցման գնահատման արդյունքների հաստատման մասին

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է հետևյալ շտկված անհամապատասխանությունը:

ա) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով կատարել են համապատասխան շտկումները,

բ) «Մասնագիտական փորձառություն» և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշները չեն շտկվել և չեն համապատասխանում:

Հիմք ընդունելով վերը նշվածը հանձնաժողովը որոշեց հայտը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին, ներկայացնել փաստաթղթեր ներկայացնելու պահանջ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել՝ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցների» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել 2017 թվականի օգոստոսի 7-ի ժամը 10:30-ին, հասցեն՝ Ջրվեժի համայնքապետարան՝ գ. Ջրվեժ, Մելքոնյան 76:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան

Անդամներ՝ Ս.Թադևոսյան

Գ.Բաղալյան

Քարտուղար՝ Ա.Պետրոսյան